



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 36Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 21Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Նախագահի 28.08.2017թ. թիվ ՆՀ-530-Ա հրամանագիրը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Դատավորների կնիքների և դրոշմակնիքների գծապատկերները հաստատելու մասին» թիվ 21Լ որոշման 1-ին հավելվածում ուժը կորցրած ճանաչել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Խաչատուր Խաչատրյանի անվամբ կնիքի գծապատկերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 30-ից:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2017թ. օգոստոսի 29
ք. Երևան